

համար՝ քաղաքային յայտնի և գործունեայ իրաւասու ինժեներ-մեխանիկ Սրշակ Ս. Բարեանին: Վաղուց է, որ Վանքի եկեղեցին կարօտում էր մի այդպիսի եւանդուն և շնորհալի երեց-փոխանին: Հշմարիտ է, մի երկու տարի առաջ եկեղեցին յայա-նի բարեգործ պ. Ա. Մանթաշեանի առատաձեռն նուիրարե-րութեամբ ներսից չքեղապէս նորոգուեցաւ, բայց ներկայումս բարձեալ կարօտ է նա մեծ նորոգութեան և մեծամեծ պա-կասութիւններ ունի: Միականները այդ ծանր պարտաւորու-թիւնը դրին նորընտիր երեցփոխանի վերայ և չսխալուեցան: Պ. Բարեանը, թէպէտ և մինչև այժմ ոչինչ չէ ստացել իւր նա-խորդից, սակայն կազմել է կարևոր նորոգութիւնների նախա-հաշիւը և արդէն կատարել է մի քանի կարևոր և անհրաժեշտ նորոգութիւններ, մինչև հիմնական նորոգութեան ձեռնարկելը: Վերացրել է եկեղեցում գտնաւորուող ամէն չարիք, կարգի է դրել եկեղեցու արդիւնքների ստացումը և այլն և այլն: Ցան-կանում ենք նորան ամենայն յաջողութիւն:

ՆԱՄԱԿ ՀՈՒԼԱՒԵՐԻՑ

Մեր զիւղը իւր հիմնուելու օրից ոչ մէկի պնքան պար-տական չէ, որքան Ռոմանոս Նաղիբեանցին, որ գեռ 1859 թ. իւր ծննդավայրում առաջին անգամ դպրոցի շէնք կառուցեց և երեք ուսուցիչների ծախքը հոգայով երկար տարիներ պա-հեց: Դասական իրերն անգամ աշակերտներն ստանում էին ձր-րի: Գիւղի զրազէտները ամենն էլ նրա սաներն են, որոնցից մի քանիսը Թիֆլիզում այժմ յայտնի են իբրև առևտրականներ և զրազէտներ: Ռոմանոսը իւր գործունէութեամբ իբրև զրա-զէտների մեկենաս նշանաւոր էր իւր ժամանակ. իւր առատա-ձեռնութեան պատճառով յայտնի էր Թիֆլիզում քարերար-մականունով. Ներսիսեան դպրոցի եւանդուն հոգարարձուն էր և 60ական թ. հայ Թատրօնի հիմնադիրներից մինը: Այդ նը-շանաւոր աղգայինը 1882 թ. վախճանուած և թաղուած է տե-ղիս Ս. Մեսրոպ եկեղեցու բակում, ուր մի ժամանակ կանգնած էր նրա դպրոցի շէնքը: Մինչև օրս, այսինքն ողջ 22 տարի այդպիսի հանգուցեալի գերեզմանը մնացել է անշիւրիմ, ոտների տակ տրորուելիս, այն ինչ նրա ամուսինը յայտնի է իբրև Թիֆլիզի հարուստներից մինը և այժմ այդ քաղաքի մի եկեղեցու վերաշինութեան համար մտադիր է վեց հազար ծախսելու, բայց չգիտենք ինչո՞ւ պնտում է իւր անուանի ա-մուսնու գերեզմանի վրայ մի հասարակ բար զննելու: Ցեղիս ե-րիտասարդութիւնը այժմ նորա սաներից մէկի գրգմամբ ու-ղոււմ է հանդանակութիւն անել և ողջ գիւղի կողմից մի հա-մեստ արձան կանգնեցնել Ռոման Պաւլիչի գերեզմանի վրայ:

որ անչափ մեծ ծառայութիւն է արել իւր ծննդավայրին և ջերմ սրտով սիրել նրա հողն ու ջուրը:

ՄԽԻԹ-ԱՐԻՆ.

3 սեպտ. 1904 Շուշաւէր.

ԵԱՆՏԱՅՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

Բագուարնակ մեծ. պ. Պօղոս Յ. Ղուկասեանը գիտաւորութիւն ունէր իւր հանգուցեալ դասեր յիշատակին հայ եկեղեցի կառուցանել Եալտայում և նորա յատակագծի պատրաստութիւնը յանձնուած էր յայտնի ճարտարագետ պ. Տէր Միքէլեանին, որ առանձնապէս ուսումնասիրել է Հայկական ճարտարագետութիւնը երկար ծանապարհորդութեամբ Գուգարաց աշխարհի և Անւոյ աւերակներում: Մենք տեսանք արդէն պատրաստի յատակագիծը, որ մի շատ հոյակապ գործ է և Գովկասի արդի հայ եկեղեցիներից գերազանցում է բուն հայ ճարտարագետութեամբ: Նյութն, ինչպէս մենք իմացանք հաւաստի աղբիւրներից, արդէն ձեռնարկել են այդ փառաւոր եկեղեցու շինութեան:

Պ. ԶԻՐՎԱՆՋԱԴԻՅԻ ՄԻ ՆՈՐ ՊԻՆՍ.

Մեր աշխատակից Շիրվանդադէն գրել է մի նոր դրամ «Պատուի համար» վերնագրով, որ պիտի ներկայացուի առաջիկայ ձմեռը Թիֆլիսի և Բագուի հայ բեմերի վրայ: Նիւթը առնուած է մեր նորագոյն բուրժուազիայի կեանքից: Գործողութիւնը կատարւում է Բագուում: Բովանդակութիւնը առաջ չենք բերում, քանի որ պիտի պիտի տպագրուի «Լուսնային» էջերում:

Վերջերս պ. Շիրվանդադէն մի քանի հանգամանքների պատճառով գրեթէ հեռացել էր գրական աշխարհից, Բայց ներկայումս նա սկսել է գրել նախկին եռանդով և պիտի շարունակի աշխատակցել «Լուսնային» կանոնաւոր: